'ի Գաղա, ուր նստէր Բդեշխն. և չգտեալ օգնութիւն ինչ 'ի նմանէ՝ իջին 'ի Յոպպէ, և 'ի 22 Յունիսի նաւեցին անտի, և 2 Օգոստոս հասին 'ի Կոստանդինուպոլիս. և յետ դեգերելոյ այսր և անդր, որոշեցին փոյթ տանել շահել ըստ բաւականին զսիրտ Բդեշխին Գազայի, եւ տալ զոր խնդրէրն, զի մի խսպառ կորուսցեն զամենայնն. մանաւանդ զՍ. Տեղիս, զորս միւսանգամ շահիլն չէին բաւական բիւրաւոր քսակք դրամոց, որպէս զիորձ առեալ էին Լատին կրօնաւորք, յուսալով վերստին 'ի ձեռս բերել զվանքն զՍիոն, որոյ վասն աղաչեցին զթագաւորն Գաղղիոյ. և նա առաքեաց դեսպանս 'ի Դուռն մեծամեծ պատարագօք. այլ չեղեւ հնար շրջել զմիտս թագաւորին Օսմանցւոց. զի ասէր նա՝ եթէ թագաւորն Գաղղիոյ տացէ հրաման կանգնել մզկիթս 'ի Փարիզ և 'ի Հռոմ, յայնժամ և ես տաց ձեզ զլեառն Սիոն։

Եւ տեսեալ նորա թէ Եղիազար վարդապետ Անթապցի յաջողակէ 'ի գործս և փարթամ ընչիւք, դիմեաց առ նա և աղաչեաց ձեռնտու լինիլ ինքեան դրամովք և աշխատութեամբ, և խոստացաւ առնել զնա իւր փոխանորդ, և ապա նաեւ յաջորդ Պատրիարքութեան, թէպէտ Աստուածատուր զփոխանորդութիւն Եղիազարու մուրհակաւ հաստատեաց 'ի դատարանի, այլ ոմանք 'ի միաբանեաց ոչ ընկալան զայն՝ և ոչ յանձն առին յանձնել նմա զիրս վանաց, մինչեւ հարկ լինիլ Եղիազարու ինքնին մատուցանել դիր աղաչանաց 'ի Դուռն եւ հրովարտակաւ հաստատել զայն, որով բարձաւ ընդդիմութիւնն. և 'ի ժամանել նորա յԵրուսաղէմ, յանձն արարին զյանձանցանս վանաց Ս. Յակոբայ։ Աստուածատուր Պատրիարք յետ առնլոյ զհաւանութիւն յԵղիազարէ, գնաց նովաւ հանդերձ առ Ռուհիլան Հայ իշխան Վանեցի, որ նստէր յայնժամ 'ի Կոստանդինուպոլիս, և էր գործակից տեղակալաց Պատրիարքութեան. և ձեռամբ նորա մատոյց դիր աղաչանաց առ Եպարքոսն, Պոյնի Էյրի Մեհէմմէտ Փաշայ։ Բոնեցան յԱրքունի դիւանին արձանագրութիւնք առաջին հրովարտակաց տուեալ Հայոց. զտին զհրովարտակս Սէլիմայ առաջնոյ և որդւոյ նորին Սիւլէյմանայ, զանց արարեալ զայլսվք. զի 'ի նոսին գրեալ էին Հապէշք, Գոյտիք և Ասորիք հեռեւողք Հայոց,